Գրենոբլի քաղաքապետարան Սևանի քաղաքապետարան

ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՍԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԳՐԵՆՈԲԼԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ

ՄԻՋԵՎ

2017-2019

Սևանի քաղաքապետարանը, ի դեմս Սևանի քաղաքապետ պարոն Սարգիս Մուրադյանի, մի կողմից և

Գրենոբլի քաղաքապետարանը, ի դեմս Գրենոբլի քաղաքապետ պարոն Էրիկ Պիոլի, մյուս կողմից, համաձայն 2016թ.-ի նոյեմբերի 7-ի ավագանու որոշման

-Կարևորելով Հայաստանի հանրապետության և Ֆրանսիայի հանրապետության միջև գոյություն ունեցող բարեկամության և համերաշխության կապերը,

-Կարևորելով երկու քաղաքների միջև 2004թ. կնքված քույրացման հայտարարագիրը և 2010թ. հոկտեմբերի 9-ին Սևանում կնքված կայուն և տեղական տուրիզմի զարգացման խարտիան,

-Կարևորելով Ֆրանսիայի հանրապետության տարածքային խմբավորումների ընդհանուր օրենսգիրքը, և հատկապես L.1112-1 հոդվածներն ու դրան առնչվող ապակենտրոնացված համագործակցության այլ կետերը,
-Հիշեցնելով, որ Գրենոբլի և Սևանի քաղաքապետարանները համագործակցում են շուրջ 10 տարի և համատեղ ծրագրեր են իրականացնում Ռոման-սյուր-Իզեր, Վարդենիս, Վիեն, Գորիս քաղաքների , Իզերի գլխավոր խորհրդի և Գեղարքունիքի մարզպետարանի հետ,

Հաշվի առնելով և մեկի, և մյուսի կողմից ցուցաբերած ցանկությունը, ինչպես նաև իրականացված և ընթացիկ բազմաթիվ ծրագրերը՝

<u>Ստորագրեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.</u>

Ստորագրեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

Հոդված 1. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Սևանի և Գրենոբլի քաղաքապետարանները ցանկանում են սերտորեն համագործակցել ինչպես երկխոսության զարգացման, փորձի և հմտությունների փոխանակման , մարդկային, տնտեսական, սոցիալական և կայուն զարգացմանը նպաստելու, այնպես էլ ապակենտրոնացման ամրապնդմանը նպաստելու համար:

Հոդված 2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ

Սույն համաձայնագրում տեղ գտած համագործակցության առանցքները վերաբերվում են հետևյալ բնագավառներին.
- Ինստիտուցիոնալ մակարդակով փոխանակումներ,
- Սևանի պատմական, մշակութային և զբոսաշրջային ժառանգության գնահատում, ուսումնասիրություն տարածքների բարեկարգման բնագավառում,
- Ֆրանսախոսության և ֆրանսերեն լեզվի ուսուցման զարգացում,
- Հանրային առողջության ոլորտի զարգացման աջակցություն,
- Տնտեսական զարգացում և սոցիալ-տնտեսական ներգրավվածություն,
- Սևանի և Գրենոբլի միջև հանրային և մշակութային փոխանակումներ
- ցանկացած բնագավառ, որը հետագայում նպատակահարմար կհամարվի և կսահմանվի այս պայմանագրին կից հավելված ավելացնելու միջոցով:

Համագործակցությունը կկայանա յուրաքանչյուր կողմի օրենքների ուժին համապատասխան:

Հոդված 3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

3.1 Նախատեսվող գործողություններ

Այս համագործակցության նպատակներն իրականացնելու համար և սույն համաձայնագրի շրջանակներում , երկու կողմերը պարտավորվում են համատեղ և շարունակաբար իրականացնել հոդված 2-ում նշված բնագավառների ծրագրերը: Նրանք ցանկանում են մասնավորապես մոբիլիզացնել իրենց ջանքերը հետևյալ գործողությունների համար.

- **Ինստիտուցիոնալ մակարդակով փոխանակումներ**
  - Սևանի և Գրենոբլի քաղաքապետարանների բաժինների միջև փորձի փոխանակումներ
  - Տեղական կառավարման ամրապնդում,
- **Սևանի պատմական, մշակութային և զբոսաշրջային ժառանգության գնահատում, ուսումնասիրություն տարածքների բարեկարգման բնագավառում**
  . Սևան քաղաքի արժևորման աջակցություն,

. Զբոսաշրջության դերակատարների և տարածքների հնարավորությունների ամրապնդում. փորձառության փոխանցում, զբոսաշրջության դերակատարների հնարավորությունների ամրապնդում, հյուրընկալություն բնակչի տանը ծրագրի զարգացում,

. Զբոսաշրջության կառուցքավորում. Սևանի զբոսաշրջության տեղեկատվական կենտրոնի հզորացում և տեղական արտադրանքի արժևորում,

. Աջակցություն զբոսաշրջության աշխուժացմանը և վաճառք իրականացնելուն. հաղորդակցման ռազմավարության մշակում, հաղորդակցման կապերի զարգացում, Սևանում զբոսաշրջային նշանակալից իրադարձության կազմակերպում, զբոսաշրջային օպերատորների հետ կապերի հզորացում /ֆրանսիացի և հայ/, հայկական արտադրանքի վաճառքն իրականացնելու նպատակով առևտուր իրականացնող օպերատորների հետ կապերի զարգացում,

. Վերականգնվող էներգիաներ ծրագրի ցանցի առաջխաղացում և կառուցքավորում,

-Աջակցում Ֆրանկոֆոնիային և մշակութային բազմազանությանը

. Աջակցում մշակութային բազմազանությանը ֆրանսիական և հայկական տարածքներում,

. Աջակցում ֆրանկոֆոնիային. Ֆրանսերենի դասընթացների և Ֆրանկոֆոնիայի տոնի կազմակերպում,

. Աջակցում Սևանի ֆրանկոֆոն ակումբին և ֆրանկոֆոն իրադարձություններին,

-Աջակցում հանրային առողջության ոլորտի զարգացմանը

. Սևանի բժշկական հաստատությունների հնարավորությունները ամրապնդելու աջակցման ծրագիր. մանկապարտեզների բուժկետերի վերանորոգում…, Սևանի բժշկական հաստատությունների անձնակազմի /հիվանդանոց, պոլիկլինիկա, մանկապարտեզների բուժքույրեր…/ առաջին օգնության վերապատրաստում,

- Սևանի և Գրենոբլի միջև հանրային և մշակութային փոխանակումներ

- Սևանի և Գրենոբլի քաղաքացիական հասարակությունների միջև կապերի ամրապնդում
- Գրենոբլում Հայաստանի և Սևանում Ֆրանսիայի առավել լավ ճանաչվածություն:

3.2 Ֆինանսական միջոցների գործարկում

Այս ծրագրի նախնական արժեքը, առանց գնահատման, պայմանականորեն կազմում է 250 000 Եվրո, ինչը բաժանվում է երկու կողմերի միջև, որի համար արտաքին համաֆինասավորման աղբյուրներ վերագտնելու ջանքեր են պետք:

Հոդված 4. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Օպերատորներ / Սևանի և Գրենոբլի քաղաքապետարանների բաժիններ, Սևանի և Գրենոբլի ասոցիացիաներ ..... / կմասնակցեն սույն համաձայնագրով սահմանված գործողությունների կատարմանը: Որոշ ծրագրեր կիրականացվեն Ռոման-սյուր-Իզեր
և Վիեն քաղաքների, Իզերի գլխավոր խորհրդի և նրանց համապատասխան հայ գործընկերների հետ համատեղ:

Հոդված 5. ՂԵԿԱՎԱՐՈՒՄ

Պիլոտային խումբը, որը կազմված է երկու համայնքերի պաշտոնյաներից , հանդիպում է տարին մեկ անգամ: Հաստատում է աշխատանքային ծրագիրը, սահմանվում են ծրագրավորված գործողությունների իրականացման պայմանները, գնահատում է իրականացվող գործողությունների նպատակահարմարությունը և հարկ եղած դեպքում դրանք շտկում:

Գործում է տեխնիկական խումբը՝ բաղկացած Սևանի և Գրենոբլի քաղաքապետարանների աշխատակիցներից և երկու համայնքերի կողմից նշանակված փորձագետներից, որոնք պատասխանատու են նախապատրաստելու պիլոտային խմբի որոշումները: Նրանք հանդիպում են առնվազն տարին մեկ անգամ և պատրաստում պիլոտային խմբի աշխատանքները:

Այս կոմիտեների համար քարտուղարություն է հաղիսանում հրավիրող խմբավորումը:

Հոդված 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1 Սևանի քաղաքապետարան

Սևանի քաղաքապետարանը կհեշտացնի այս գործողությունների իրականացումը և կկարողանա մոբիլիզացնել պետական կամ այլ միջազգային կառույցների ֆինանսական միջոցները, այնուհետև դրա մասին տեղյակ պահել Գրենոբլի քաղաքապետարանին:

Սևանի քաղաքապետարանը Գրենոբլի քաղաքապետարանին կտրամադրի այս ծրագրերին վերաբերվող և իրեն ծանոթ , ինչպես նաև տեղական և ազգային մակարդակով համագործակցության ծրագրերին առնչվող փաստաթղթերը:

Սևանի քաղաքապետարանը Գրենոբլի քաղաքապետարանի հետ ֆինանսապես կմասնակցի համագործակցության տարեկան ծրագրերին և կներկայացնի այդ մասնակցության տարեկան հաշվետվություն:

6.2 Գրենոբլի քաղաքապետարան

Գրենոբլի քաղաքապետարանը ֆինանսապես կմասնակցի Սևանի քաղաքապետարանի հետ համագործակցային ծրագրերի իրականացմանը և կկարողանա մոբիլիզացնել Ֆրանսիայի պետական կամ Եվրոմիության ֆինանսները՝ տեղյակ պահելով Սևանի քաղաքապետարանին: Գրենոբլի կողմից իրականացվող ծրագրերը կլինեն համաձայնեցված և պլանավորված Սևանի քաղաքապետարանի հետ:

6.3 Անվտանգությունը

Ֆրանսիացի և հայ պաշտոնյաները երաշխավորում են Սևան և Գրենոբլ քաղաքների անձանց և պաշտոնյաների անվտանգությունն ու ունեցվածքը, ինչպես նաև իրենց համայնքներում իրենց իսկ կողմից մոբիլիզացրած փորձագետների անվտանգությունը;
Երկու քաղաքներն էլ կհսկեն, թե ինչ են ներկայացնում օպերատորները տեղերում՝ հարգելով երկու երկրների կողմից սահմանված կանոնները՝ անվտանգության ապահովման նպատակով:

Հոդված 7. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7.1 Տևողությունը

Սույն համաձայնագիրն ուժի մեջ է ստորագրման պահից և երկու երկրների միջև գործողությունների վավերացումից , մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ը:

7.2 Դադարեցումը

Սույն համաձայնագրի կիրառումից կամ իրագործումից բխող ցանկացած տարաձայնություն կկարգավորվի համագործակից երկու կողմերի միջև բանակցությունների փոխհամաձայնեցման արդյունքում:

Անհամաձայնության կամ փոխադարձ պարտավորությունների չպահպանման դեպքում կողմերից յուրաքանչյուրը կարող է ամեն պահի դա չեղյալ համարել մինչև 6 /վեց/ ամիս ժամկետում:

Կազմված է 4 օրինակից, ք. , 2016թ.

Սևանի քաղաքապետարան **Գրենոբլի քաղաքապետարան**

Քաղաքապետ՝
Սարգիս ՄՈՒՐԱԴՅԱՆ

Քաղաքապետ՝
Էրիկ ՊԻՈԼ